ՑՈՒԼԱԿ ՄԱԼԽԱՍՅԱՆ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԸ

3 Եվրաինտեգրման գործընթացների զարգացումը

Եվրոպական ինտեգրման գործընթացների վերլուծությունը վկայում է, որ դրանք միշտ չէ, որ հարթ են ընթացել: Այսպես, օրինակ, 1990-1998 թվականների ընթացքում ԱՄՆ-ի համախառն ներքին արդյունքի աճը կազմել է 27%, իսկ Եվրամիությանը՝ ընդամենը 15%: Չափազանց լուրջ հիմնախնդիր է նաև զբաղվածության հարցը: Եվրամիության միայն 15 երկրներում կա շուրջ 16 մլն գործազուրկ, որոնք աշխատունակ բնակչության 9-10% են կազմում: Այդ թիվը երկու անգամ ավելի է ԱՄՆ-ի և երեք անգամ ճապոնիայի գործազուրկների թվից[1]: Ընդ որում, գրականության մեջ Եվրամիության՝ ԱՄՆ-ի ու ճապոնիայի հետ հարաբերությունների ապագայի վերաբերյալ գոյություն ունեն հակասական ու իրարամերժ կարծիքներ: Ոմանց համար[2] դա փոխշահավետ համագործակցության հնարավորություն է, մյուսների[3] համար՝ սուր մրցակցություն ու տնտեսական պատերազմ: Իսկ ԱՄՆ-ի համեմատ եվրոպական երկրների տնտեսական զարգացման տեմպերի դանդաղ աճը սկզբնական շրջանում դժվարությունների հանգեցրեց եվրոյի կայացման խնդրում: Կա տեսակետ, համաձայն որի «Եվրոպայի գինը», այսինքն՝ Եվրամիության երկրների տնտեսության վրա ընկած ծանր բեռը, եթե նրանք չմիավորվեն, սարսափելի է, մյուս կողմից, ընդհանուր շուկայի ստեղծման շնորհիվ կարող է տնտեսվել 200-300 մլրդ ամերիկյան դոլար[4]: Եվրոպան կամ կարող է օգտվել այդ հնարավորությունից, կամ էլ հայտնվել ճապոնիայից ու Ամերիկայից ետ ընկած վիճակում[5]: Հաճախ էլ Եվրամիության կառույցներում վերազգային, դաշնային սկզբունքները բախվում են միջպետական, կոնֆեդերատիվ սկզբունքների հետ:

---

[1] "Европа вчера, сегодня, завтра", под ред. Н. П. Шмелева, М., 2002, с. 27.

[2] Gantz Nanette, Roper John, "Towards a new partnership. US-European Relations in the Post-Cold War Era", Institute for Securities Studies of West European Union, Paris, 1993.

[3] Thurow Lester, "Head to head. The Coming Economic Battle among Japan, Europe and America", London, 1994.

[4] Burstein D., "Earthquake: Europe's explosive challenge will change the world", New York, 1991, p. 25-28.

[5] Kennedy Paul, "Preparing for the Twenty-First Century", New York, 1997, p. 302-310

Անցած հազարամյակից որպես ժառանգություն մնացած փոխադարձ վիրավորվածության ու դառնության զգացումը, որը երբեմն միջէթնիկական լարվածությունների ու բախումների տեղիք է տալիս, խորապես արմատավորվել է եվրոպական ժողովուրդների ենթագիտակցության մեջ: Դրա ողբերգական օրինակը նախկին Հարավսլավիայի արյունալի փլուզումն էր: Մայրցամաքի արևելքի ու արևմուտքի միջև հակադրությունը պահպանվում է ոչ միայն տնտեսական զարգացման տարբեր մակարդակների միջև, այլև մշակութահոգեբանական ու արժեքային ոլորտներում, որի հաղթահարումը, ինչպես ցույց է տալիս նախկինում տարանջատված երկրի՝ Գերմանիայի օրինակը, հաջողություն կունենա մեկից ավելի սերունդների եռանդուն ջանքերի գործադրման արդյունքում: Ակնհայտ է նաև զգալի տնտեսական ինտեգրման ու պաշտպանական գործառույթ իրականացնող եվրոպական սեփական ինքնության հաստատման ծգձգվող գործընթացի անհամապատասխանությունը:

Այնուամենայնիվ, եվրոպացիների մեծամասնության գնահատմամբ երրորդ հազարամյակի շեմին ժամանակակից աշխարհում իրենց դերակատարության հնարավորությունը գնալով մեծանում է: Այն փաստի արձանագրումը, որ ԽՍՀՄ փլուզումից հետո ԱՄՆ-ը աշխարհի միակ գերտերությունն է, ամենևին չի խանգարում եվրոպական գործարար, քաղաքական ու մտավորական վերնախավին նորովի գնահատել մոլորակի տարբեր ուժային կենտրոնների միջև հարաբերակցությունը ու 21-րդ դարում դրանց զարգացման հեռանկարները:

Ֆրանսիացի տնտեսագետ Ֆ. Ադեմարի գնահատմամբ «համաշխարհային արտադրության մեջ ԱՄՆ-ի չափաբաժինը 20-րդ դարի վերջին մոտ էր 1929թ. ցուցանիշին: Այն էապես կրճատվեց 1929թ. ճգնաժամից հետո, այնուհետև կտրուկ բարձրացավ երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում, որից հետո նորից հետընթաց արձանագրեց: 1945թ. 40%-ի ցուցանիշից այն 1995 թվականին կրճատվեց մինչև ոչ ավելի, քան 25%-ի ցուցանիշը»[6]:

Հարկ է նաև նշել, որ ԱՄՆ վճարման հաշվեկշռի պակասորդը, որը 1995թ.-ից աճել է 2,5 անգամ և կազմել է 260 մլրդ ԱՄՆ դոլար, անշեղորեն մեծացրել է ԱՄՆ արտաքին պարտքը, որի ծավալը հասել է 1,5 տրիլիոն դոլարի[7]: Այդ պակասորդը փոխհատուցվում է երկու հիմնական աղբյուրների հաշվին՝ Բրետոն-Վուդյան համակարգի շրջանակներում դոլարի՝ իբրև համաշխարհային տարադրամի ու վճարման միջոցի դերի և օտարերկրյա, հիմնականում եվրոպական կապիտալի ներհոսքի շնորհիվ: Սակայն այդ երկու հանգամանքները չի կարելի մշտական գործոններ համարել:

Ամերիկյան մասնագետների գնահատմամբ 1999թ. սկզբին եվրոյի «ներմուծումը» վաղ թե ուշ կստիպի նահանջել դոլարին որպես միջազգային

---

[6] Le Monde-Economie, 1998, 10 fevrier

[7] "Европа вчера, сегодня, завтра", с. 28.

վճարումների միակ գործիք[8]: Արդյունքում կարող է խարխլվել ԱՄՆ կարևորագույն առավելությունը. արտերկրում ազգային տարադրամի շրջանառության հաշվին ինքն իրեն վարկավորելու հնարավորությունը:

Սկզբնական շրջանում մեկնարկային կուրսի համեմատ ԱՄՆ դոլարի նկատմամբ եվրոյի փոխարժեքի անկումը, ըստ էության, շատ չէր անհանգստացնում Եվրամիության երկրների մեծամասնությանը, հատկապես դրանցից առաջատարին՝ Գերմանիային, քանի որ այդ պարագայում Եվրոպան լրացուցիչ խթան էր ձեռք բերում իր ապրանքների արտահանման համար: Արդյունքում այդ ապրանքների արտահանումից ստացվող եկամուտն ավելին էր, քան ներմուծվող ապրանքների թանկացումից գոյացող կորուստը: «Եվրոյի ներմուծումը նոր հեռանկարներ է բացում երկբևեռ միջազգային տնտեսական աշխարհակարգի ձևավորման համար՝ ունակ սասանելու երկրորդ համաշխարհային պատերազմից հետո հաստատված ԱՄՆ գերիշխանությունը: Եվրոպական ընդհանուր շուկայի ստեղծման առաջին իսկ օրերից համաշխարհային առևտուրն այդուհետ ղեկավարվում է համատեղ ուժերով, ինչն էլ հնարավորություն տվեց Եվրոպային առավել սերտորեն ինտեգրել սեփական առևտրային համակարգը միջազգայինին ու այդ ոլորտում ԱՄՆ-ին հավասար դերակատարում ու ազդեցություն ունենալ: Տնտեսական հզորության հիմնական չափանիշներից ելնելով նոր Եվրոլենդը համարժեք է լինելու կամ գերազանցելու է ԱՄՆ-ին: Եվրոն, ըստ ամենայնի, մարտահրավեր է նետելու դոլարի միջազգային ֆինանսական գերիշխանությանը»,- զգուշացնում է Միջազգային տնտեսության ամերիկյան ինստիտուտի տնօրեն Ֆրեդ Բերգստենը[9]:

ԱՄՆ-ի արտարժույթային ֆինանսական գերիշխանության խոցելիությունն այլևս չի փոխհատուցվում ռազմաքաղաքական գործոնների միջոցով: ԽՍՀՄ փլուզմամբ Վաշինգտոնը Արևմտյան Եվրոպայի հետ հարաբերություններում կորցրեց կարևորագույն խաղաքարտ, այն է՝ խորհրդային «չարիքի կայսրության» վտանգի դեմ հյուսիսատլանտյան դաշինքի գործընկեր պետությունների անվտանգության երաշխավորի դերակատարումը: Ֆրեդ Բերգստենը, որը նախկինում պատասխանատու պաշտոն է զբաղեցրել ԱՄՆ ազգային անվտանգության խորհրդում, նշում է, որ «սառը պատերազմի» ավարտը Եվրոպայի համար էապես կրճատեց Միացյալ Նահանգների ռազմական հզորության նշանակությունը՝ ի չիք դարձնելով անվտանգության գործոնի դերը, որը հաճախ հնարավորություն էր տալիս հեշտությամբ լուծել վիճելի տնտեսական հարցերը ի նպաստ հակակոմունիստական դաշինքի պահպանման: «Այսուհետ,- նշում է Բերգստենը,- ԱՄՆ-ի ու Եվրոպական միության միջև

---

[8] Նույն տեղում, էջ 29:

[9] Bergsten C. Fred, "America and Europe: Clash of the Titans?", Foreign Affairs, 1999, March-April, p. 20.

հարաբերությունները հիմնված են լինելու առավելապես երևութական հավասարության վրա»:[10] Միացյալ Նահանգներին զգիջելով «համաշխարհային ոստիկանի» ծախսատար ու ռիսկային դերը, արևմտաեվրոպական երկրները դժկամությամբ են վճարում այդօրինակ ծախսերը և որ ամենակարևորն է՝ միանշանակ մերժում են ամերիկացիների բոլոր փորձերը ներառելու ռազմական գործոնը ֆինանսատնտեսական ոլորտում տրանսատլանտյան հարաբերությունների համատեքստի մեջ, ինչպես դա արվում էր «սառը պատերազմի» ժամանակ:

Թեև տարածաշրջանային համագործակցության զարգացմանը նպաստող կազմակերպություններ գոյություն ունեն նաև աշխարհի այլ տարածաշրջաններում, սակայն դրանցից ոչ մեկը օժտված չէ այնպիսի առևտրային նշանակությամբ ու չի առաջացնում հասարակական և քաղաքական այնպիսի հետաքրքրություն, ինչպես Եվրոպական Միությունը: Նրան է բաժին ընկնում համաշխարհային առևտրի մեկ երրորդը[11]: Եվրամիության ֆինանսական ռեսուրսները միասին վերցրած վիթխարի են, քանի որ այստեղ գտնվում են աշխարհի խոշորագույն բանկեր, ապահովագրական ու ֆինանսական ընկերություններ: Աշխարհի տաս խոշորագույն առևտրային պետություններից յոթը եվրոպական են[12]: Ներկայում Եվրոպական Միությունը վերածվել է «ազատության, անվտանգության ու արդարության տարածության»[13]:

Մեր օրերում աշխարհում չափազանց հակասական գործընթաց է ամերիկյան «զանգվածային մշակույթի» տարածման միտումը: Զուգակցելով կիրառելիությունն ու մատչելիությունը այն, անխոս, գրավիչ է հատկապես երիտասարդության համար, որն այդպիսի մշակույթն ընկալում է իբրև մարտահրավեր իրենց երկրների ավագ սերունդների պայմանականություններին ու սովորույթներին: Միևնույն ժամանակ, այդ մշակույթի կիրառելիությունն ու համապատասխանաբար «արտահանման ներուժը» սահմանափակված են չափազանց խիստ շրջանակներում: Ամերիկյան ապրելակերպից ու արժեքային համակարգից կտրված էսթետիկական չափանիշների մակերեսային նմանակումը որպակապես այլ մշակութային պայմաններում առաջ է բերում տարանջատման ձգտում ոչ միայն ֆանատիկ իսլամական արմատականների կողմից: Այդ առումով բնութագրական միտք է արտահայտել եվրոպական հիմնախնդիրների հայտնի ամերիկացի մասնագետ Ու. Պֆայֆը: Իր կարծիքով, չորս ու կես հարյուրամյակ տևած եվրոպական տերությունների գաղութային դարաշրջանը, իր բոլոր անարդարություններով ու դաժանություններով հանդերձ, շատ ավելի խոր հետք է թողել «երրորդ աշխարհի» երկրների ժողովուրդների կյանքում, քան համեմատաբար երիտասարդ

---

[10] Նույն տեղում, էջ 20-21:
[11] Ա. Հարությունյան, «Եվրոպական Միություն», Երևան, 2005, էջ 44:
[12] Նույն տեղում, էջ 44:
[13] В. Г. Шемятенков, "Европейская интеграция", М., 2003, с. 43.

ամերիկյան մշակույթը, որի չփումը արտաքին աշխարհի հետ առավել կարճ էր, մակերեսային ու սահմանափակ: «Հին Հունաստանը, Հռոմը, 8-ից 11-րդ դարերի արաբական կայսրությունը, Իսպանիան, Պորտուգալիան, Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան օտարերկրյա հասարակությունների վրա շատ ավելի խոր հետք ու մշակութային ազդեցություն են թողել, քան դա երբևէ կարող էին անել Ամերիկայի Միացյալ Նահանգները»[14]: Այդ պայմաններում եվրոպացիների հավատը սեփական ուժերի հանդեպ չէր կարող չաճել: Սակայն այն համարժեք չէր նախկին «եվրոպակենտրոն» գաղափարի հետ: Ձերբազատվելով համընդհանուր ընդօրինակման առարկա հանդիսանալու մեծապետական նկրտումներից՝ Եվրոպայի պետությունները ու ժողովուրդները ներկայում շատ ավելի մտահոգ են սեփական մոդելի պաշտպանությամբ, քան այն «մյուսների վզին» փաթաթելու խնդրով: Բնութագրական է այն հանգամանքը, որ «Մեծ Լառուս» հանրագիտարանային բառարանում կարելի է գտնել «քաղաքակրթություն» հասկացության մեկ այլ սահմանում, որն էապես տարբերվում է առաջինից. «Որևէ երկրին կամ հասարակությանը ներհատուկ մտավոր, գեղարվեստական, բարոյական ու նյութական կյանքի բնութագրական գծերի ամբողջություն»[15]: Այս դեպքում մյուսների համար իբրև «բարձրագույն նպատակ» ծառայելու որևէ առանձին քաղաքակրթության ձգտումը անհետ վերանում է: Եվրոպական քաղաքակրթական մոդելը զրկվում է նախկին ունիվերսալության ու քարոզչական նկրտումներից. Երկրորդ համաշխարհային պատերազմն առհավետ ցրեց գերմանացի նացիստների «հազարամյա ռեյխի» մասին զառանցանքի նմանվող երազանքը, «սառը պատերազմը»՝ համաշխարհային պրոլետարական հեղափոխության վերաբերյալ խորհրդային ուտոպիան, ապագաղութացումը՝ եվրոպական մետրոպոլիաների իրենց նախկին կայսրություններում «քաղաքակրթական առաքելության» վերաբերյալ կեղծ կոչերն ու կարգախոսները:

Բոլոր քաղաքակրթական մոդելների, այդ թվում՝ եվրոպականի գոյության իրավունքի պաշտպանությունը, ինչպես նաև յուրաքանչյուր առանձին քաղաքակրթության՝ համաշխարհային քաղաքակրթության մեջ բացառիկ ու յուրահատուկ ներդրման հանգամանքի անվերապահ ընդունումը բնական արձագանք է այն փորձերի դեմ, որոնք ձգտում են ազգային մշակույթների բազմազանությունը մատուցել մեկ ընդհանուր շրջանակի մեջ: Մասնավորապես եվրոպացիների մոտ այդ արձագանքը ի հայտ եկավ Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամակցության բանակցությունների ընթացքում մաքսային վճարների նվազեցման ժամանակ, երբ Եվրամիության ներկայացուցիչները, անտեսելով ամերիկյան կոշտ դիմադրությունը, ջանում էին հասնել Եվրոպայի այսպես կոչված մշակութային բացառիկության իրողության ընդունմանը, այն է՝ համաշխարհային շուկայում, այդ թվում նաև

[14] Bilsh du Monde, Edition 1999, Le Monde, Paris, 1999, p. 22.
[15] Le Grand Larousse en 5 volumes, Tome 2, p. 664.

սահմանափակող վարչական լծակների կիրառմամբ մշակութային ուղղվածություն ունեցող կինեմատոգրաֆիկական և ձայնատեսողական ազգային ծագում ունեցող արտադրանքի շահերի պաշտպանությունը[16]:

Այդպիսի մոտեցման անհրաժեշտությունն ընդունում են նաև ԱՄՆ մտավորական վերնախավի որոշ ներկայացուցիչներ: Ստենֆորդի համալսարանի պրոֆեսոր Սեմյուել Հանտինգտոնի 1996թ. լույս տեսած «Քաղաքակրթությունների բախումը և համաշխարհային աշխարհակարգի վերակառուցումը» հանրահայտ գրքի առանցքային թեման 21-րդ դարում միջքաղաքակրթական հարաբերություններն են: Բացառելով համաշխարհային աշխարհակարգի բոլոր այն ձևերի գոյության հնարավորությունը, որոնք հիմնված են քաղաքակրթական որևէ մոդելի, այդ թվում նաև ամերիկյանի գերիշխանության վրա, Հանտինգտոնը երրորդ հազարամյակում մարդկության պատմության շարժիչ ուժ է հռչակում քաղաքակրթական կենտրոնների միջև մշակութային բախումները[17]: Քանի որ որոշ քաղաքակրթությունների՝ մյուսներին սեփական արժեքների պարտադրումը կարող է պատճառ հանդիսանալ անթիվ լոկալ բնույթի բախումների առաջացման համար, հեղինակի եզրահանգմամբ իրավիճակից միակ ելքը մյուսների ներքին գործերին չմիջամտելու սկզբունքի որդեգրումն է ու տարբեր քաղաքակրթությունների միջև օպտիմալ հավասարակշռության վիճակի հասնելու փնտրտուքը:

Հանտինգտոնի տեսակետը բավականաչափ իրատեսական է: Այն 21-րդ դարում բազմաբևեռ աշխարհակարգի հաստատման հնարավորության կանխատեսում է: Ըստ նրա «ներկայում կա միայն մեկ գերտերություն: Բայց դա չի նշանակում, որ աշխարհը միաբևեռ է դարձել ... Միաբևեռ համակարգի հաստատման ուղղությամբ միակ գերտերության ջանքերը հակադրվում են մեծ տերությունների ջանքերին հասնելու իրապես բազմաբևեռ աշխարհակարգի հաստատմանը: Մեծ ներուժով տարածաշրջանային տերությունները առավել մեծ չափով են առաջ մղում սեփական շահերը, որոնք հաճախ բախվում են ամերիկյան շահերին ու հետաքրքրություններին: Այդպիսով, համաշխարհային քաղաքականությունը, որը «սառը պատերազմի» երկբևեռ համակարգից անցում է կատարել Պարսից ծոցի պատերազմով ընդգծված կարճաժամկետ միաբևեռության փուլի, ներկայում և ապագա մեկ-երկու տասնյակ տարիների ընթացքում միաբևեռությունը զուգորդելու է բազմաբևեռության հետ՝ նախքան 21-րդ դարում իրապես բազմաբևեռ աշխարհակարգին անցնելը»[18]:

Միևնույն ժամանակ Հանտինգտոնը նույնացնում է աշխարհաքաղաքական և քաղաքակրթական բևեռների հասկացությունները, որոնք որոշվում են դավանաբանական հատկանիշից ելնելով: Մինչդեռ դրանք ամենևին էլ

---

[16] "Европа вчера, сегодня, завтра", с. 32.

[17] Huntington Samuel P., "The Clash of Civilizations? Foreign Affairs Agenda: The New Shape of World Politics", New York, 1999.

[18] Huntington Samuel P., "The Lonely Superpower", Foreign Affairs, March-April, 1999, p. 20.

նույնական չեն: Օրինակ, երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ԱՄՆ-ն և ԽՍՀՄ-ը մի կողմից և Գերմանիան ու Ճապոնիան մյուս կողմից աշխարհաքաղաքական դաշնակիցներ էին՝ չնայած այդ երկրների արմատական քաղաքակրթական տարբերություններին: Եվ, ընդհակառակը, Ֆրանսիան ու Գերմանիան 19-րդ դարի վերջին ու 20-րդ դարի սկզբին երեք անգամ արյունալի պատերազմներ են մղել միմյանց դեմ՝ անկախ այն հանգամանքից, որ պատկանել են միևնույն եվրոպական քաղաքակրթությանը:

Ավելին, քաղաքակրթական բախումների հարատևության գաղափարը ոչ միայն ճիշտ չէ, այլև՝ վտանգավոր: Այն մարդկությանը տանում է դեպի այն ժամանակաշրջանը, երբ պատերազմները, ըստ գերմանացի ռազմական տեսաբան ու պատմաբան Կլաուզեվիցի, «ընդամենը այլ միջոցներով քաղաքականությունը շարունակելու միջոց էին համարվում, այսինքն պետությունների միջև հարաբերությունների բնականոն տարբերակ»[19]: Մինչդեռ ներկայում իրադրությունը որակական փոփոխություններ է կրել: Ռազմական բախումների հիմնական զոհը քաղաքացիական հասարակությունն է, քանզի մեր օրերում ճակատի ու թիկունքի միջև սահմանագիծը փաստորեն ջնջվել է: Միջուկային ու քիմիական զենքերի տարածման ներկա պայմաններում նույնիսկ սովորական զինատեսակների կիրառումը կարող է անուղղելի վնաս հասցնել համայն մարդկության բնակչությանն ու շրջակա միջավայրին: Եվրոպայում խիտ բնակեցվածության պայմաններում այդ հանգամանքն առավել քան ակնհայտ է: Հանդիսանալով երկու համաշխարհային պատերազմների հիմնական թատերաբեմն ու դրանց զոհը՝ եվրոպական երկրները շատ ավելի լավ են գիտակցում այդ վտանգի հավանականությունը, քան այլ երկրներ:

Տնտեսության, գիտության ու տեխնիկայի համաշխարհայնացումը, միջազգային տեղեկատվական տարածության ձևավորումը, որը մարդկանց, ժողովուրդների, մշակույթների շփման ու հաղորդակցման մեծ հնարավորություններ ստեղծեց, քաղաքակրթությունների մեկուսացումը, առավել ևս հակամարտությունը ոչ միայն անիմաստ, այլև անարդյունավետ դարձրեց: Այդ մասին են վկայում նաև մարդկության առջև ծառացած համընդհանուր մարտահրավերները՝ էկոլոգիական ու տեխնածին բնույթի ճգնաժամերը, միջուկային զենքի անարգել տարածման գործընթացը, միջազգային ահաբեկչությունը, կազմակերպված հանցավորությունը, թմրանյութերի ապօրինի առևտուրը և այլն: Դրանց կարելի է դիմագրավել միայն համընդհանուր միասնական ուժերով: Այդօրինակ հիմնախնդիրների լուծման փորձերը ոչ միայն մի երկրի, այլև մեկ մայրցամաքի շրջանակներում կանխավ անհաջողության են մատնված:

---

[19] "Введение в теорию международных отношений и анализ внешней политики", под ред. Н. А. Ломагина, Санкт-Петербург, 2001, с. 59.

Իսպանացի գրող ու փիլիսոփա Խոսե Օրտեգա Ի Գասետը ընդգծում էր, որ «քաղաքակրթությունն իրենից նախևառաջ համատեղ գոյակցության կամք է ներկայացնում»[20]: Մշակույթների, լեզուների, կրոնների յուրահատկությունների հաստատման ու արմատավորման գործընթացը ոչ թե ինքնամեկուսացման ճանապարհով է ընթանում, որն ի դեպ անխուսափելիորեն անկման է հանգեցնում, այլ դրանց շփումների ու փոխադարձ հարստացման միջոցով: «Քաղաքակրթությունները համագործակցում ու մրցակցում են միմյանց հետ, մինչդեռ դրանց միջև բախումները երբեք չեն հանդիսացել մարդկության պատմության շարժիչ ուժը ... Հակառակ քաղաքակրթական տեսության կողմնակիցների պնդումների համամարդկային քաղաքակրթությունը անհերքելի իրողություն է: Դա առանձին քաղաքակրթությունների պարզ հանրագումար չէ, այլ մարդկության պատմության ընթացքում կուտակված փորձի ու գիտելիքների այնպիսի ընդհանրություն, որն արտահայտում է մարդկային էությունն ու ողջ մարդկության կողմից ընկալվում որպես համընդհանուր սեփականություն», - իրավացիորեն նշում է Հանտինգտոնի հետ բանավիճող քաղաքագետ Գ. Շահնազարովը[21]:

Ագրեսիվ քաղաքակրթական հակամարտության ծայրահեղ ձև է հանդիսանում ռասիզմը՝ այսպես կոչված «ցածր» ռասաների նկատմամբ «բարձր» ռասաների գենետիկ առավելության քարոզը: Այդ ստահոդ դրույթը երբեմն «մարմնավորվել է» կեղծ գիտական աշխատություններում՝ 1855թ. Ֆրանսիայում լույս տեսած դուքս Ժոզեֆ-Արթուր Գոբինոյի «Մարդկային ռասաների անհավասարության մասին գրական ակնարկը»[22], գերմանական նացիզմի գաղափարախոս Ալֆրեդ Ռոզենբերգի «20-րդ դարի առասպելը» /1930թ./[23]: Դրանք եվրոպական քաղաքակրթությանը անասելի դժբախտություններ են բերել: Հարկ է նաև նշել, որ էթնիկական, մշակութային ու դավանաբանական քաղաքակրթական հիմքի վրա ռազմական բախումները շատ ավելի վտանգավոր են, քանի որ դրանց հիմքում ընկած են ոչ թե առանձին պետությունների աշխարհաքաղաքական շահեր, այլ ավելի խորքային ու բազմաբովանդակ գործոններ: Այդ պատճառով նմանօրինակ բախումները միտում ունեն դուրս գալու բանական վերահսկողությունից /Բալկաններ, Կովկաս, Մերձավոր Արևելք, Կենտրոնական Աֆրիկա և այլն/:

Խորհելով համաշխարհային զարգացման երկու հիմնարար միտումների՝ մի կողմից միջազգային հարաբերությունների համաշխարհայնացման, տարածաշրջանային մակարդակում ինտեգրված միավորումների ստեղծման և, մյուս կողմից, հաճախ ոչ կենսունակ, թվով շուրջ 200 մոնոէթնիկ պետությունների ի հայտ գալու փաստի ու դրանց հնարավոր բախման մասին, ՄԱԿ-ի

---

[20] "Европа вчера, сегодня, завтра", с. 34.
[21] "Pro et Contra", T. 2, M., 1997, p. 152.
[22] De Gobineau, le comte J.A., "Essai sur l'Inegalite de Races Humaines", 4 vols, Paris, 1853-1855.
[23] Rosenberg Alfred, "The Myth of the 20th Century", Germany, 1930.

նախկին գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալին կարծիք է հայտնել, որ այդ միտումները սերտորեն փոխկապակցված են[24]: Ավելին, մեկի գոյությամբ է պայմանավորված մյուսի ի հայտ գալը. որքան ավելի են միասնականանում տնտեսությունը, գիտությունն ու կենցաղը, այնքան ավելի մեծ է առանձին ժողովուրդների ձգտումը պահպանելու սեփական ազգային, մշակութաքաղաքակրթական ինքնությունը, որը պետությունների ու մայրցամաքների հարստության ու ռազմական հզորության, զարգացման մակարդակների էական տարբերությունների համայնապատկերի լույսի ներքո սեփական շահերի պաշտպանության գրավական է հանդիսանում: «Սառը պատերազմի» ավարտից հետո ներքին ու միջազգային լոկալ բախումների մեծամասնության հիմքում ընկած այդ հակասությունը կարող է հարթվել միայն բազմաբևեռ աշխարհի բոլոր քաղաքակրթական կենտրոնների ինքնության հաստատման, փոխադարձ կախվածության և համերաշխության սկզբունքի որդեգրման միջոցով՝ ընդդեմ երրորդ հազարամյակում համընդհանուր մարտահրավերների ու միաժամանակ հնարավորությունների ամբողջության:

Այդ վճռորոշ ու ճակատագրական հիմնախնդրի լուծման խնդրում Եվրոպան կարող է բացառիկ դերակատարություն ունենալ: Երեք դար տևած գլոբալ ներկայության արդյունքում որպես ժառանգություն մնացած մյուս բոլոր քաղաքակրթական կենտրոնների հետ սերտ կապերը /այդ թվում՝ Մեծ Բրիտանիայի առնչությունները Հյուսիսային Ամերիկայի ու Հարավային Ասիայի հետ, Ֆրանսիայի՝ հյուսիսային ու տրոպիկական Աֆրիկայի հետ, Իտալիայի՝ միջերկրածովյան տարածաշրջանի հետ, Իսպանիայի ու Պորտուգալիայի՝ Լատինական Ամերիկայի հետ, Ռուսաստանի՝ Կովկասի ու Միջին Ասիայի հետ/ այսուհետ առանց գաղութատիրական նկրտումների ու սեփական քաղաքակրթական մոդելը մյուսների «վզին փաթաթելու» ցանկության, Եվրոպային եզակի հնարավորություն են տալիս Արևելքի ու Արևմուտքի, Հյուսիսի ու Հարավի միջև որպես միջնորդ հանդես գալու համար: Սակայն Եվրոպան այդ բարձր կոչումը կկարողանա իրականացնել միայն սեփական ներքին տարանջատվածությունը հաղթահարելու միջոցով, որն ի դեպ, անցյալ հարյուրամյակում բազմիցս ողբերգական հետևանքներ է ունեցել:

Ամփոփելով՝ կարելի է ասել, որ եվրոպական քաղաքակրթությունն իր ուրույն ու եզակի տեղն ունի համաշխարհային քաղաքակրթության մեջ և մեծապես նպաստել է վերջինիս հարստացմանն ու առաջընթացին:

---

[24] "Европа вчера, сегодня, завтра", с. 35.